ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԼՐԿՆԱԼ - ՄԻ- ՀՈՂ-18/15»

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

Շինարարության որակի տեխնիկական հսկողության

ք. Վանաձոր 28.09.2018թ.

«Լոռու մարզային հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ Գ.Մ.Փաշինյանի

(կազմակերպության անվանումը , կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը)

Որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ-ն, իրենն Ընկերության տնօրեն Ս.Մարգարյանի (այսուհետև՝Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

*1. Պայմանագրի առարկան*

1.1 Սույն պայմանագրով ՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2 Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունը ՀՀ, Լոռու մարզ , Վանաձոր քաղաքի Գ.Նժդեհի 57 հասցեում գտնվող «ԼՐԿՆԱԼ» ՓԲԸ-ի շենքի ներքին վերանորոգման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողությունը այսուհետ՝<<Ծառայություն>>:

1.3 Աշխատանքների կատարման ժամկետն է՝ ___________________մինչև շինարարության ավարտը:

1.4 Ծառայությունը մատուցված է համարվում Պատվիրատուի , կամ նրա լիազոր ներկայացուցիչների կողմից հանձման – ընդունման ակտի ստորագրության պահից:

*2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները*

2.1 Կատարողը պարտավորէ՝

2.1.1 Ծառայությունը մատուցել պատշաճ որակով.

2.1.2 Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով ,սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում:

2.2 Պատվիրատուն պարտավորվում է Ծառայությունները վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան, Ծառայության հանձման – ընդունման ակտի ստորագրության պահից սկսած ____________օրվա ընացքում:

2.3 Պատվիրատուն, 10- օրյա ժամկետում, Կատարողին է վճարում ,որպեսՊայմանագրի կանխավճար Պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը, կամ ըստ փոխադարձ համաձայնության ոչ պակաս քան Պայմանագրի 40% -ը:

2.4 Պատվիրատուն իրավունք ունի ՝

2.4.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայության ընթացքը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը:

*3. Պայմանագրի գինը և վարձատրությունը*

3.1 Կողմերի համաձայնությամբ ծառայության գինը սահմանվում է 50000 (հիսուն հազար ) ՀՀ դրամ ներառյալ բոլոր հարկերը:

3.2 Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է սույն պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

*4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը ( ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ )*

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և անհնարին է դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը : Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

*5. Վեճերի լուծման կարգը*

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով :

Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

*6. Եզրափակիչ դրույթներ*

6.1Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասնեն:

6.2.Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով , 2 / երկու / օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

*7. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «ԼՐԿՆԱԼ» ՓԲԸ | «ԳՈԼԴ-ՆԵԹ»ՍՊԸ |
| ք. Վանաձոր, Գ.Նժդեհի 57 | ք.Վանաձոր, Տարոն- 2 ԲՇՀ 3 58շ.3րն. |
| ՀՎՀՀ՝ 06902087 | (հասցեն) |
| Հ/Հ 1570015001210100, Ամերիաբանկ ՓԲԸ | ՎՏԲ-Հայաստան բանկ թիվ 83 մ/ճ |
| | Հ/Հ 16093018597200 |
| | (բանկային վավերապայմանները) |
| | ՀՎՀՀ 06935067 |
| ________________ | Տնօրեն ________ Ս.Մարգարյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |